# Քրիստոնյա Հայաստան

2003, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (162)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությանը

Նոյեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:



Վեհափառ Հայրապետը ողջունելով հյուրերին՝ գոհունակությամբ նշեց Բուշ դյու Ռոն նահանգի եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեւ ստեղծված ջերմ հարաբերությունները ու օգտավետ փոխգործակցությունը՝ իբրեւ հայ-ֆրանսիական բարեկամության իրական վկայություն:

Հանդիպման ավարտին Վեհարանում Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը եւ ֆրանսիական «Altitude 5165» (Մասիս) մարդասիրական կազմակերպության ներկայացուցիչ Կլոդ Հարությունյանը ստորագրեցին համաձայնագիր, որով Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը 1902թ. Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց Հայրապետի կողմից կառուցված Մայր Աթոռի նախկին հիվանդանոցի շենքը եւ կից տարածքը տրամադրում է վերոգրյալ կազմակերպությանը՝ Էջմիածին քաղաքում ասամնաբուժարան հիմնելու համար: Ատամնաբուժարանը, որ կսպասարկի շրջակա բնակչությանը, կառուցվելու է Ժան-Նոել Գերինիի հովանավորությամբ:

Այս տարվա հունիսին, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ եւ Ժան-Նոել Գերինիի մասնակցությամբ տեղի էր ունեցել ատամնաբուժական կենտրոնի օրհնության կարգ եւ հուշաքարի բացում:

*«Մեր աղոթքն է, որ Տերը պահի ու պահպանի մեր երկու ժողովուրդների միջեւ հաստատված եղբայրությունը եւ բարեկամությունը՝ ամրացնելով համագործակցության ոգին: Բարեգործության պտուղներից օգտվում են մեր զավակները, սակայն բարեգործությամբ առավել եւս զորանում եք դուք»,-* դիմելով հյուրերին՝ նշեց Նորին Սրբությունը:

Նույն օրը համագործակցության համաձայն հայտարարություն ստորագրեցին նաեւ Ժան Նոել Գերինին եւ Էջմիածնի քաղաքապետ Հրաչ Աբգարյանը՝ պարտավորվելով սատարել ատամնաբուժարանի հիմնադրմանը:

### Ուխտի պատարագ՝ Մայր տաճարում



Նոյեմբերի 16-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով, Սբ. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, հերթական ուխտի պատարագը մատուցեց Կ.Պոլսի հայոց պատրիարքության միաբան Տ. Արամ եպս. Աթեշյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի Սրբազան Հորը ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Սբ. պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Արամ Սրբազանը:

*«1700 տարիներ ի վեր մեր երանաշնորհ հայրապետներն աղոթեցին մեզ համար, որպեսզի Աստված անսասան պահի իր իսկ ձեռքով հիմնած այս սուրբ եկեղեցին, հայրապետներն աղոթեցին իրենց տառապած ժողովրդի համար...Աղոթում ենք մեր արժանընտիր ու պատվական Հայրապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Կաթողիկոսի համար: Թող Աստված առողջությամբ եւ հաջողությամբ պսակյալ երկար կյանք պարգեւի նրան, լիակատար հաջողություն իր աստվածահաճո գործունեության մեջ: Եվ թող Հիսուս Քրիստոս անսասան պահի իր իսկ հիմնած Սբ. Էջմիածնի եկեղեցին»,-* նշեց Սրբազան Հայրը:

Ս. Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգեւորականներ, Ֆրանսիայի Բուշ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի:

### Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ԼՂՀ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանին

Նոյեմբերի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի ուղեկցությամբ:

*«Անչափ ուրախ ենք տեսնել ձեզ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում՝ Վեհարանի հարկի ներքո եւ վստահեցնել մեր եկեղեցու զորակցությունը: Մեր աղոթքներում միշտ ունենք Արցախ աշխարհը, եւ Մեր հայցն է, որպեսզի Տերը խաղաղության մեջ պահի ու պահպանի ազգը համայն, Հայաստան երկիրը մեր, Արցախը եւ նրա հերոսական ժողովուրդը»,-* հյուրերին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ գոհունակությամբ նշելով Հայաստանի եւ Ղարաբաղի խորհրդարանների սերտ փոխգործակցությունը: Հայոց Հայրապետը բարձր գնահատեց նաեւ Ղարաբաղի իշխանությունների հոգածությունը Հայ եկեղեցու եւ մասնավորապես Արցախի թեմի հանդեպ, որի արտահայտությունն է Ստեփանակերտի կենտրոնում վեր հառնող նոր եկեղեցին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ԼՂՀ խոսնակ Օլեգ Եսայանը, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության այցի արդյունքները՝ միտված Հայաստանի եւ Արցախի խորհրդարանական կապերի առավել զորացմանը:

### Գարեգին Բ Կաթողիկոսն այցելեց Մոսկվա եւ Հարավային Ռուսաստանի թեմ

Նոյեմբերի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ի հրավերով, մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու նոյեմբերի 26-ին կայանալիք Ռուս Պատրիարքի եւ Կովկասի կրոնական առաջնորդների քառակողմ հանդիպմանը: Հանդիպման ընթացքում Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդը, Ամենայն Հայոց Հայրապետը, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Երկրորդը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ շեյխ Ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն կքննարկեն կովկասյան տարածաշրջանում խաղաղության ամրապնդման եւ միջկրոնական հանդուրժողականության զորացմանը վերաբերող խնդիրներ:

Վեհափառ Հայրապետին ընկերակցեցին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Տ. Մեսրոպ աբղ. Պարսամյանը՝ որպես գավազանակիր եւ Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը:

Մոսկովյան հանդիպումից հետո, նոյեմբերի 27-ին Գարեգին Բ Կաթողիկոսն իր օրհնաբեր հայրապետական այցը կատարեց Հարավային Ռուսաստանի հայոց թեմ: Այցի ընթացքում Նորին Սրբության ձեռամբ օծվեց Պյատիգորսկի Սբ. Սարգիս նորակառույց եկեղեցին: Վեհափառ Հայրապետը մասնակցեց նաեւ Վլադիկավկազի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման 160-ամյակին նվիրված տոնակատարություններին: Հանդիպումներ եղան նաեւ տեղի իշխանությունների եւ Ռուս Ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների հետ:

### Գիտաժողով՝ Վազգենյան հոգեւոր դպրանոցում

Նոյեմբերի 16-ին Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում տեղի ունեցավ «Անձի հոգեւոր խորհուրդը եւ հոգեբանական էությունը» թեմայով մեկօրյա ուսանողական գիտաժողով՝ նվիրված Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանին:

Բացման խոսքով հանդես եկավ Սեւանի Վազգենյան Հոգեւոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին աբղ. Հարությունյանը՝ կարեւորելով նմանատիպ գիտաժողովների կազմակերպումները աշխարհիկ եւ հոգեւոր կրթական հաստատությունների միջեւ:



Զեկուցողները Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Երեւանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հոգեբանության ֆակուլտետների ուսանողներ էին: Ներկայացվեցին անձի հոգեւոր ներաշխարհին առնչված տարբեր թեմաներով զեկույցներ. «Աստծո պատկերը եւ նրա շեղումները անձի հոգեկանում», «Միջանձնային փոխհարաբերությունները եւ կոնֆլիկտները», «Ինքնաստեղծության հոգեբանական ասպեկտները», «Անհատական խոստովանողի հոգեկան ապրումները», «Սիզմաների մասին. Աստվածաբանական-հոգեբանական համառոտ ակնարկ» եւ այլն:

Զեկույցներից հետո ամփոփիչ խոսքով հանդես եկան Առողջապահության ազգային ինստիտուտի հոգեբուժության, հոգեթերապիայի եւ բժշկագիտության հատուկ ամբիոնի վարիչ բժշկ. գիտ. դոկտ. պրոֆ. Կոնստանտին Դանիելյանը եւ Երեւանի ավանդական բժշկության ինստիտուտի պրոռեկտոր, բժշկ. գիտ. թեկն. Թելման Վանունին: Նրանք բարձր գնահատեցին ուսանողների աշխատանքը եւ կարեւորեցին եկեղեցականի դերը մարդու հոգեւոր դաստիարակության գործում: Գիտաժողովի ավարտին պատվոգրեր հանձնվեցին զեկուցողներին:

Տես էջ 3

# Գրիգոր Նարեկացու «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ» նոր մեկնությունը



*Գրիգոր Նարեկացու հեղինակած ավելի քան 20 տաղերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Յարութեան տաղը»՝ թե՛ իր բանաստեղծական գեղեցկությամբ եւ թե՛ այլաբանական բնույթով: Մաշտոցի անվան մատենադարանում պահվող ձեռագրերից մեկում (թիվ 2079, արտագրված մոտ 1622 թ.) այն վերնագրված է այլ կերպ՝ «Մայլի տաղ ի Գրիգորէ Նարեկացւոյ ասացեալ»: Միջնադարյան տաղերի եւ հայրենների հմուտ հետազոտող Ասատուր Մնացականյանը տարբեր ձեռագրերի հիման վրա փորձել է վերականգնել Նարեկացու սույն տաղի նախնական լրիվ բնագիրը, որը եւ տպագրում ենք այստեղ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գեւորգ Աբգարյանի մասնակի լրացումներով (Գ. Աբգարյան, Վերծնություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», Էջմիածին, 1974, թիվ 2, էջ 40-41):*

### Ա

Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:
Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց.
Եւ ի վերայ նորա աթոռ են կարգեալ,
Եւ ի վերայ նորա՝ գահոյք ոսկեղէնք,
Եւ ի վերայ նորա՝ բեհեզք ծիրանիք,
Եւ ի վերայ նորա՝ Որդի արքայի,
Եւ յաջմէ նորա վեցթեւեան սերովբէքն,
Յահեկէ նորա՝ բազմաչեայ քերովբէքն,
Առաջի նորա՝ մանկունք գեղեցիկ,
Ի գիրկս նոցա՝ խաչն տէրունական,
Ի ձեռին նոցա՝ սաղմոսարան եւ քնար,
Որք երգէին զերգս՝ ասելով.
Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:

### Բ

Ածեալ են, ածեալ,
Զսայլիկն ածեալ են, կացուցեալ.
Ի Մասեաց յաջ կողմանէն
Զ սայլիկն ածեալ են, կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:
Եթէ հարիւր բարդ խոլրձան, վեց կորընկան,
Մին մանուշակ՝ խրձադիզեալ
Զսայլիկն ածեալ են, կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:
Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
Եւ սամոտիքն՝ ապրիշմի,
Փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ,
Եւ խարազան՝ փնջեալ ծաղիկ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:
Եթէ եզինք են սաթ ու սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,
Եղջեւրն ամէն խաչանման,
Եւ մազն ամէն՝ հոյլ մարգարիտ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:
Այն ճորտն ճոխ էր եւ ճապուկ,
Ուռամիջակ, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայն ածէր եզնամոլին,
Կանչիւն առնէր աթոռակին.
Դարձեալ խաղայր եզնամոլը՛ն,
Խաղայր, ցնծայ աթոռակըն.

*(Գրիգոր Նարեկացու բնագիրը չընկալելով՝ գրիչներն աղավաղել են այսպես՝ «Դարձեալ խաղայր եզնամոլին, Խաղայր, ցնծայր աթոռակին»: Նույն աղավաղումներն ունեն նաեւ հետագա տպագիրները: Դրա հետեւանքով Աս. Մնացականյանը նշված երկու տողը թարգմանել է հետեւյալ կերպ՝ «Դարձյալ ձայնում ամոլներին, Ցնծում, պարում աթոռակին»: Այնպես է հասկացվում, թե եզնամոլին ձայնում եւ աթոռակին ցնծում ու խայտում էր ճորտը՝ այսինքն՝ Հովհաննես Մկրտիչը: Գ. Աբգարյանը միանգամայն ճիշտ ուղղում է «եզնամոլն» եւ «աթոռակն» (Էջմիածին, 1974, թիվ 1), եւ ըստ այսմ պետք է լինի՝ «Նորից առաջ էր խաղում (շարժվում) եզնամոլը, խաղում, ցնծում էր աթոռակը»):*

Եւ ահա շարժէր սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն:
Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին,
Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանայր.
Եւ ահա շարժէր՝ սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն:

### Գ

***Սայլն՝ ի Սինեայ
Երկրորդ օրէնքն էր Մովսէսի.
Եւ այն հարիւր բարդ խոլրձանն՝
Այն նահապետքն են՝ մարգարէք.
Եւ այն վեց բարդ կորնկանն՝
Վեցօրեայ գործքն Աստուծոյ.
Եւ այն մին մանուշակ՝
Միաւորեալ Երրորդութիւնն.
Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
Այն Յովհաննէսն էր Մկրտիչն.
Եւ այն չորս կուրծն սայլին՝
Աւետարանն էր Քրիստոսի:***

### Դ

Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ.
Եւ ճռընչալով գայր, մտանէր յԵրուսաղէմ.
Եւ որդիք նոր Սիովնի ելին ընդառաջ,
Որք երգէին զերգս ասելով.
Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան,
Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ
Եւ վերստին նորոգմամբ
Յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:
Փա՜ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:

## Ա մաս

«Յարութեան տաղի» գեղարվեստական կատարելությունը եւ այլաբանական բովանդակությունը՝ հեղինակային մեկնությամբ հանդերձ, առիթ են տվել բազմաթիվ քննությունների ու մեկնաբանության: Ոմանք առավելապես անդրադարձել են սայլի արտաքին նկարագրությանը. գյուղական սայլ՝ իր արտասովոր, շքեղ սարք ու սարվածքով, զարդարված ծիրանի բեհեզներով եւ ոսկեղեն գահույքով, որի վրա բազմել է արքայորդին՝ աջ ու ձախ կողմերում՝ սերովբեներ ու քերովբեներ. իսկապես հազվադեպ երեւույթ՝ հայ միջնադարյան մատենագրության մեջ:

Քննության առնելով Գրիգոր Նարեկացու տաղերը՝ Մանուկ Աբեղյանը մատնանշում է. **«Ավելի գեղեցիկ է նրա «Յարութեան տաղը» սայլի պատկերով, որ մի այլաբանություն է եւ որի մեկնությունը հենց ինքը հեղինակը հորինել է: Առանց այդ մեկնության՝ այդ երգը գրեթե լոկ նկարագիր է մի սայլի, միայն այլաբանության պատճառով, գուցե եւ աղավաղված լինելով, հորինվածքի գաղափարը մթնած է»** (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 625):

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ԳԻՐ

## Վերարծարծելով հայտնի փաստերը

Կան տվյալներ, ըստ որոնց, Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենից առաջ եղել է հայոց գիր: Այդ գիրը չի պահպանվել, չի պահպանվել այդ գրով ստեղծված որեւէ երկ: Այդ գրի գոյությունը վկայում են փաստերը:

Հայոց հին դիցարանում իր անփոխարինելի տեղն է ունեցել դպրության Տիր աստվածը: Առաջին իսկ անդրադարձը շատ անմիջական է. եթե մի ժողովուրդ չունենար դպրություն՝ մի՞թե կստեղծեր համապատասխան բնագավառը հովանավորող աստված:Տրամաբանական պատասխանն է՝ ո՛չ: Ինչը նշանակում է, որ հայ ժողովուրդն ունեցել է դպրություն, իսկ դպրությունն առանց գրի չէր կարող լինել: Դպրություն բառը բացատրվում է որպես գիր, այբուբեն, նաեւ գրականություն, մատենագրություն:

Հույն պատմիչ Փիլիստրատոսը, որը եղել է Կարակալլա ինքնակալի (211-217 թթ.) ժամանակաշրջանի մատենագիր, իր «Վարք Ապոլոնիոս Տիանացու» աշխատության մեջ այսպիսի վկայություն է թողել. «Պատմում են (...), որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով հետեւյալը. Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն. այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից» (Ի. Հարությունյան, «Հայոց գրերը», Թիֆլիս, 1892, էջ 252): Խոսքն այստեղ ամենայն հավանականությամբ վերաբերում է պարթեւների Արտավան արքայի որդուն՝ հայոց Արշակ Ա թագավորին (34-35 թթ.), որի մասին տեղեկություն է թողել Տակիտոսը: Ահա հայոց այս Արշակ արքան նշված գրությամբ մի հովազ է նվիրում Դիոնիսիոս աստծուն, որը «հնդկական Նյուսիայի պատճառով հնդկացիներից եւ արեւելյան ժողովուրդներից կոչվում էր Նյուսով» (նույն տեղում): Այս կենդանին ընտելանում ու դառնում է ձեռնասուն, սակայն գարնանը, «հաղթահարվելով սիրուց եւ արյան պահանջ զգալով», փախչում է լեռները, ուր եւ ստորին Տավրոսում վերստին բռնվում է: Արշակի մակագրած զարդի հայոց գրերի կապակցությամբ պատմությունը լռում է, բայց հույն պատմիչի խոսքն ապրում է եւ մտածել տալիս «հայերեն տառերի» գոյության մասին:

Մովսես Խորենացին, հիշատակելով ասորական քրիստոնեական մատենագրության հիմնադիր Բարդածանին (154-223 թթ.), որին շատ բարձր է գնահատում՝ «...պատմության մեջ չստեց, որովհետեւ հզոր էր խոսքով...», նրան իսկ նկատի ունենալով՝ գրում է. «Նա մեր կողմերն եկավ, հուսալով, թե կկարողանա հետեւորդներ գտնել վայրենի հեթանոսների մեջ: Բայց երբ ընդունելություն չգտավ, մտավ նա Անի ամրոցը, կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ՝ նաեւ թագավորների գործերը. նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը փոխադրեց ասորի լեզվի եւ ապա նրանից հունարենի» (1-ին գիրք, գլ. ԿԶ): Հայոց գրերի գոյության մասին վկայում է «բոլորը փոխադրեց ասորերենի եւ ապա նրանից հունարենի» արտահայտությունը: Հարց է առաջանում. ո՞ր լեզվից փոխադրեց, ամենահավանական պատասխանը հայերենն է:

Համանման մեկ այլ փաստ. խոսելով Տիգրանի մասին՝ Խորենացին ասում է, որ նա Աժդահակին «գրով հայտնում է, ինչ որ նրա սրտի խորքում կար» (1-ին, ԻԹ), բայց չի ասում՝ ի՞նչ գրով. թերեւս այն պատճառով, որ այդ մասին տեղեկություն չի թողել նաեւ իր աղբյուրը՝ Մար Աբաս Կատինան:

Խորենացին գրում է նաեւ հայոց լեզվի գործառության շրջանակի մասին. «Իսկ (մեր երկրի) արեւմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ...» (2-րդ, Գ), «Իսկ արեւելյան կողմից, հայերեն խոսակցության վերջին սահմաններում, երկու կողմնակալ է նշանակում» (2-րդ, Ը): Սա հայոց լեզվի գործունեության տարածքն է, որը եղել է պետության լեզու, որովհետեւ լեզվով եւս պետական սահման են գծել: Պետք է ենթադրել, որ այսպես գործավարող լեզուն չէր կարող իր գրային արտահայտությունը չունենալ:



Ճշմարտության հանդեպ չմեղանչելու համար նշենք, որ Խորենացին տալիս է նաեւ հակառակը փաստող վկայություններ: Խոսելով մեր նախնիների անիմաստասեր բարքի մասին եւ նրանց մեղադրելով, որ ժամանակին գրի չառան մեր ազգին վերաբերող պատմությունները, այնուհետեւ շարունակում է. «Բայց գուցե մեկն ասի. այն ժամանակ գիր ու գրականություն չլինելու պատճառով (եղավ դա): Բայց իրավացի չի լինի այդպես կարծելը (...). կային պարսից եւ հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ...» (1-ին, Գ): Մեկ այլ փաստ. երբ Տրդատ Մեծն ավարտում է Գառնիի տաճարի շինարարությունը, նրա մեջ կառույցներ է հիմնում «իր Խոսրովիդուխտ քրոջ համար եւ նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն գրերով» (2-րդ, Ղ):

Հույն պատմիչ Հիպոլիտոսը իր «Ժամանակագրության» մեջ, 234-235 թվականներին վերաբերող դեպքերի շուրջ, ի շարս դպրություն ունեցող այլ ժողովուրդների, հիշատակել է նաեւ հայերին. «Սրանցից նրանք, որոնք դպրություն ունեն, հետեւյալն են. եբրայեցիները, որով եւ հռոմեացիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը եւ հայերը»: Իր «Ժամանակագրության» մեջ այս հատվածը թարգմանաբար զետեղել է դեռեւս Անանիա Շիրակացին (7-րդ դար):

Նախամաշտոցյան գրի մասին վկայություններ կան ոչ միայն Մովսես Խորենացու, այլեւ Ղազար Փարպեցու եւ Կորյունի աշխատություններում: Նրանք երեքն էլ վկայում են այսպես կոչված Դանիելյան գրերի մասին:

Խորենացին գրում է, որ երբ Մեսրոպն արքունիքից հեռացավ, հայոց արքան «քիչ նեղություն չէր կրում քարտուղարի պատճառով (...), նա ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետեւ պարսկական գիր էին գործածում»: Այս առիթով նրան է ներկայանում Հաբել անունով մի քահանա եւ խոստանում «հայերեն լեզվի տառեր ստեղծել՝ որ հարմարեցրել էր Դանիել եպիսկոպոսը՝ իր մերձավորը»: Թագավորն այս մասին հայտնում է հայերեն գրերի ստեղծմամբ մտահոգված Սահակ Պարթեւին եւ Մեսրոպ Մաշտոցին: Վերջիններիս խնդրանքով արքան Վահրիճ անունով մեկին ուղարկում է Հաբելի մոտ: Այնուհետեւ նրանք «միասին գնացին եւ Դանիելից լավ հմտացան վաղուց գրված տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով, բերին մատուցեցին մեծն Սահակին եւ Մեսրոպին, որոնք սովորելով եւ երեխաներին վարժեցնելով քիչ տարիներ, համոզվեցին, որ այդ նշանագրերը, այդ մուրացված գծագրությունը ընդունակ չէր վանկ առ վանկ ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյունները» (3-րդ, ԾԲ):

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՍԱՀԱԿ Գ ՁՈՐՈՓՈՐԵՑԻ
## (677-703)

*Սկիզբը՝ թիվ 19-21*

Վարդանակերտի կռիվը եղավ 703 թվականի, հավանաբար, հունվար ամսին, որն Այրարատյան դաշտի ամենացուրտ ժամանակահատվածն է: Այդ նույն ժամանակ Ներսեհ Կամսարականը եւ մի խումբ հայ ազատներ Վանանդում սպառսպուռ ոչնչացրեցին արաբական մեկ այլ զորագունդ, որով Հայաստանում գտնվող արաբական կայազորները՝ գրեթե ամբողջությամբ, կոտորվեցին: Աբդուլլահն ինքն էլ փախուստ տվեց Արաբիա: Հատկապես Վարդանակերտի կռիվը ցնցող տպավորություն էր թողել արաբների վրա, որոնք դրա մասին լսել անգամ չէին կամենում:

Գիտակցելով դաշնակցի անհրաժեշտությունը՝ հայերն ավարից բաժին հանեցին բյուզանդական Տիբերիոս Ապսիմար կայսրին եւ որպես նվեր ուղարկեցին արաբական նժույգներ ու սպանված արաբների քթերը: Կայսրը, համարելով այդ ամենը որպես հայերի հպատակության նշան, Սմբատին շնորհեց կուրապաղատի աստիճան ու պատիվ, որը հայկական զորամասերով գնաց ամրացավ Տայքում՝ իր համար կենտրոնատեղի դարձնելով Մամիկոնյանների տոհմական տիրույթ Թուխարք ամրոցը: Հայերը պատրաստվում էին պաշտպանել երկիրը, իսկ Աբդուլմելիք խալիֆը Հայաստան ուղարկեց մի մեծ բանակ՝ Մուհամմեդ իբն-Օկբայի գլխավորությամբ: Հայերը հույս ունեին ստանալ բյուզանդական կայսեր օգնությունը, սակայն կայսրն ի վիճակի չէր այդ անել եւ անգամ հույսեր էր կապում հայերի օգնության հետ՝ իր երերացող դիրքերը կայունացնելու համար: Ստեղծվեց անելանելի կացություն: Չկարողանալով սեփական ուժերով դիմադրել թշնամուն՝ հայերն աքսորում գտնվող Սահակ կաթողիկոսի միջնորդությամբ փորձեցին լեզու գտնել արաբների հետ: Դատելով ամեն ինչից, չնայած աքսորական վիճակին, Սահակ կաթողիկոսը մեծ համարում ուներ խալիֆի աչքում՝ հատկապես կապված հակաբյուզանդական հայացքների եւ Կոստանդնուպոլսում ձերբակալված լինելու հետ: Հայոց կաթողիկոսը միջնորդեց Աբդուլմելիքի առջեւ եւ արտոնություն ստացավ վերադառնալու Հայաստան եւ տեսակցելու Օկբայի հետ: Անշուշտ, Օկբան էլ իր հերթին զգուշացված էր խալիֆից, ուստի արաբները պատրաստ էին գնալու որոշակի զիջումների՝ խուսափելով անորոշություն խոստացող ռազմական միջոցներ կիրառելուց: Ցավոք, կաթողիկոսի եւ Օկբայի հանդիպումը չկայացավ: Կաթողիկոսը, որի առողջությունը մեծապես խաթարվել էր արաբական գերության մեջ, մի կերպ հասավ Միջագետքի Խառան քաղաքը եւ հույս չունենալով ապրել՝ նամակ գրեց Օկբային՝ խնդրելով խաղաղություն հաստատել հայերի հետ եւ զերծ մնալ արյունահեղությունից, ավարի համար հետապնդումներից ու ավարառությունից: Կաթողիկոսը խոստանում էր նրան իր օգնությունը, եթե իր խնդրանքները կատարվեն: Կաթողիկոսը կարգադրում է իր ուղեկիցներին, որ նամակն իր ձեռքում թողնեն, որպեսզի իր մահվանից հետո էլ Օկբան իր ձեռքից ստանա



նամակը:

Սահակ Ձորոփորեցին մահացավ Օկբայի Խառան հասնելուց մեկ օր առաջ, իսկ վերջինիս խնդրանքով կաթողիկոսի մարմինը հողին չհանձնվեց մինչեւ իր տեղ հասնելը: Հանդիպելով կաթողիկոսի դիակին եւ նրա ձեռքից, փաստորեն, ստանալով նամակը՝ Օկբան հարգեց Սահակ Ձորոփորեցու հետմահու խնդրանքը: Արշավանքը դադարեցվեց, հայ նախարարներին տեղյակ պահվեց, որ անցած-դարձածները մոռացված են, եւ նրանք կարող են իրենց տիրույթները վերադառնալ: Մինչեւ իսկ, Ղեւոնդի խոսքերով, Օկբան մոռացության տվեց Վարդանակերտի ծանր պարտությունը: Սահակ Գ Ձորոփորեցին մահացավ 703 թ. ամռանը: Խառանից նրա մարմինը բերվեց Դվին եւ հողին հանձնվեց:

Սահակ Գ Ձորոփորեցին թողել է որոշ աշխատություններ: Նրա Արմավենյաց օրվա ճառը բարձրարվեստ գործ է՝ հայկաբանությամբ աչքի ընկնող: Տաթեւացին նրան է վերագրում Խաչի եւ եկեղեցու շարականները, որոնք հայոց եկեղեցական երգերից ընտրելագույններն են: Անտարակույս, Սահակ կաթողիկոսը տիրապետել է արաբերենին, որովհետեւ Օկբային ուղղված նամակը, պատմիչի խոսքերով, նա գրել է անձամբ, իսկ Օկբան էլ այն անձամբ ընթերցել է (Հովհաննես Դրասխանակերտցի եւ Ղեւոնդ):

«Կանոնագիրք Հայոց»-ը պահպանել է 15 կանոններ, որոնք վերագրված են Սահակ վերջին կաթողիկոսին: Անտարակույս, Սահակ վերջինի անունով հիշատակված է Սահակ Գ Ձորոփորեցին: Կանոնների առկայությունը լռելյայն հավաստում է ինչ-որ եկեղեցական ժողովի մի գումարման մասին, չնայած պատմությունը նմանատիպ բարեկարգիչ ժողովի գումարման մասին հիշատակություններ չի պահպանել: Պարզ է մի բան, որ եկեղեցական պաշտոնական ժողովածուի մեջ տեղ գտած կանոններն անուղղակիորեն վկայում են Սահակ կաթողիկոսի կողմից ժողով գումարելու փաստը: Այս կարծիքն ամրապնդվում է կանոնների սկզբնամասում բերված այն տեղեկությամբ, թե արծարծված խնդիրներն առաջադրվել են Հովհաննես Սյունականի, իսկ պատասխանվել՝ Սահակ կաթողիկոսի եւ նրան աթոռակից եպիսկոպոսների կողմից:



ժողովի գոյության փաստն ընդունել է Միքայել Չամչյանը, սակայն անցկացման տեղն ու ժամանակը մնում են անորոշ: Մ. Օրմանյանը հավանական է գտնում, որ ժողովը գումարվել է, հավանաբար, 688-692 թթ. միջոցին Դվին քաղաքում, որը կաթողիկոսության աթոռանիստն էր հիշյալ ժամանակներում: Սահակ կաթողիկոսի 15 կանոններ վերաբերում են եկեղեցական ծեսերին ու սրբություններին: Սրանցից զատ, կան եւս 9 կանոններ, որոնք ընդունվել են Սահակ կաթողիկոսի նախագահությամբ գումարված Կարնո ժողովի կողմից եւ նույնպես վերաբերում են ծիսական խնդիրներին: Սակայն այս կանոնների վավերականությունը կարող է եւ կասկածի տակ առնվել, քանի որ կանոնական որոշումներն ավելի շատ ցույց են տալիս դրանց Հուստինիանոս Բ կայսեր կողմից հաստատված լինելը, որոնք մինչ այդ ընդունելի չէին նաեւ բյուզանդական եկեղեցու համար: Համենայն դեպս, այս եզրակացության օգտին է խոսում այն փաստը, որ կանոններն անհնազանդներին սպառնում են կայսերական պատիժներով:

Այժմ մի քանի խոսք յոթերորդ դարի՝ Հայոց պատմության մեջ ունեցած դերի մասին:

Յոթերորդ դարն արգասաբեր եղավ հայ ժողովրդի համար: Նշանավոր էր Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը, որը մեծ հոգածություն հանդես բերեց դեպի մտավորական շարժումը, որն էլ ծնեց նշանավոր քերթողների մի աստղաբույլ: Նա հիմնեց կամ բարեկարգեց Արշարունյաց վանքը, Շիրակի դպրեվանքը եւ մի քանի այլ դպրոցներ, որոնց մեջ փայլեց Սյունյաց վարդապետանոցը: Կոմիտաս կաթողիկոսի ժամանակներում հիշատակվում է Սյունյաց վարդապետանոցից նշանավոր Մաթուսաղան: Հայոց եկեղեցու նշանավոր դեմքերից էր Հովհաննես Մայրավանեցին, որը Դվինի կաթողիկեի փակակալն էր եւ Եզր կաթողիկոսի՝ բյուզանդական եկեղեցու հետ միաբանվելուն դեմ դուրս գալով՝ ենթարկվել էր հալածանքների եւ անարգվել Մայրագոմեցի անունով: Աղբյուրներում նա անվանված է կատարյալ փիլիսոփա, աստվածային գրքերի գիտության քաջատեղյակ անձ: Նրան են վերագրվում «Խրատ վարուց», «Հաւատարմատ» եւ «Նոյեմակ» վերտառությամբ աշխատությունները, որոնք մեզ չեն հասել: Հովհաննես Մայրագոմեցու աշակերտ Սարգիս վարդապետն էլ հայտնի է Մայրագոմեցի մականունով: Անտարակույս, նրա մահից հետո նա շարունակել է նրա գործը եւ յուրացրել համբավը: Մեր բոլոր պատմագիրները Հովհան(նես) Մայրագոմեցուն արդարացնում եւ Սարգիս Մայրագոմեցուն մեղադրում են երեւութականաց մոլորությունը, որ սկսել էր տարածվել Հայաստանում, պաշտպանելու համար: Պատմիչներից հայտնի է, որ Հովհաննես Մայրագոմեցին իրենից հեռացրել է Սարգիս վարդապետին: Սարգիս Մայրագոմեցու աղանդի կամ հայ երեւութականների դեմ առաջինը հանդես է եկել Թեոդորոս վարդապետ Քռթենավորը, որն այդպես է կոչվել խարազնազգյաց ճգնավորության համար: Թեոդորոսը Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդին էր եւ Եզրի քեռորդին, ինչպես նաեւ Մաթուսաղայի աշակերտը: Թեոդորոսը մերժել է երեւութականությունը, սակայն չի պաշտպանել քաղկեդոնականությունը: Ավելին, Թեոդորոսի ճառից կարելի է եզրակացնել, որ անգամ Եզր կաթողիկոսը երկաբնակ չէր՝ քաղկեդոնականների հասկացությամբ: Նա հաստատվել էր Արագածի ստորոտում գտնվող Սբ. Աստվածածնի վանքում, որը թերեւս կարելի է նույնացնել Հառիճի վանքին: Նրա աշակերտներից աչքի ընկան Սահակ Ձորոփորեցի եւ Հովհան Օձնեցի կաթողիկոսները: Դարի նշանավոր դեմքերից էր Մովսես Սյունեցին, որ պատված էր քերթող եւ քերթողահայր անուններով: Յոթերորդ դարը ծնեց երկու նշանավոր պատմիչներ՝ Հովհան Մամիկոնյան եւ Սեբեոս: Առաջինը հայտնի է «Պատմութիւն Տարօնոյ», իսկ երկրորդը՝ «Պատմութիւն ի Հերակլն» աշխատությամբ: Սրանց թվին պետք է ավելացնել Մովսես Կաղանկատվացուն, որի աշխատությունը հետագայում մտել է Մովսես Դասխուրանցու «Պատմութիւն աշխարհին Աղուանից» երկասիրության մեջ, Բարսեղ Ճոն վարդապետին, որ Շիրակի դպրեվանքի առաջնորդն էր, Անանիա Շիրակացուն՝ հայ մեծ բնագետին եւ մաթեմատիկոսին, Դավիթ Բագավանցուն, որ հայտնի է Իմաստասեր անունով, Փիլոն Տիրակացի վարդապետին, որը թարգմանել է Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմությունը՝ Ներսեհ Կամսարականի մեկենասությամբ, ինչպես նաեւ Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոսին, որը նույնպես հիշյալ դարի գրական նշանավոր դեմքերից էր:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Տես էջ 1*

# Քահանայական ձեռնադրություն եւ օծում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Նոյեմբերի 23-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանի շրջանակներում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, ուխտի պատարագ մատուցեց Տ. Դավիթ արք. Սահակյանը: Հընթացս սրբազան արարողության ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացան 5 սարկավագներ:

Դեռ նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո Մայրավանքում կատարվեց նորընծաների ուղղափառ հավատքի հրապարակային քննություն: Արարողության ընթացքում խարտավիլակ հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը վկայեց նորընծաների հոգեւոր-իմացական պատրաստվածության եւ արժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին եւ նզովեցին հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետեւել սուրբ առաքյալների եւ հայոց երանաշնորհ հայրապետների լույս հավատքին:

Կիրակի, հընթացս Սբ. Պատարագի, 5 ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Սբ. Խորան: Դառնալով դեպի հավասացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Սբ. Խորան բերվեց սրբալույս մյուռոնը, եւ ձեռնադրող Սրբազան Հայրը օծեց ընծայացուների ճակատները, աջ եւ ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Հովիկ սրկ. Հովհաննիսյանը վերակոչվեց Տ. Հայրիկ քահանա, Հակոբ սրկ. Հակոբյանը՝ Տ. Հակոբ քահանա, Արթուր սրկ. Պետրոսյանը՝ Տ. Տիրան քահանա, Արթուր սրկ. Հակոբյանը՝ Տ. Հովնան քահանա, Աշոտ սրկ. Վարդանյանը՝ Տ. Կյուրեղ քահանա: Դավիթ Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաեւ հաղորդության սկիհը՝ տալով նրանց պատարագելու եւ Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Ձեռնադրությունից հետո Ավագ Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Սրբազան հայրերն ու միաբանները եւ համբուրելով քահանաների սրբալույս մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը՝ շնորհավորեցին նրանց:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում կատարվեց նորաօծ չորս քահանաների՝ Տ. Հայրիկի, Տ. Տիրանի, Տ. Հովնանի եւ Տ. Կյուրեղի վեղարի տվչության եւ աբեղայի օրհնության կարգը: Մայրավանքի միաբանության շարքերը համալրվեց եւս չորս կուսակրոն քահանաներով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# Գրիգոր Նարեկացու «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ» նոր մեկնությունը



Սկիզբը՝ էջ 2

Աբեղյանի կարծիքով Նարեկացին պատկերել է **«Թագավորական հանդիսավոր գնացքը սայլով»**, որպիսին հեղինակն անպայման տեսած պիտի լիներ Արծրունյաց թագավորների արարողակարգերի ժամանակ եւ հենց այդ էլ գրի է առել:

Հայկական տաղաչափության նշանավոր տեսաբանը հատուկ ուշադրություն է դարձնում Նարեկացու գործադրած բազմազան ձեւերին ու ռիթմերին, որ համարեցված են բովանդակության փոփոխությանը: Եվ այս տեսակետից «Յարութեան տաղը» համարում է **«մեր խառն ազատ ոտանավորների մի շատ ընտիր օրինակ»** (նույն տեղում, էջ 262):

Գրիգոր Նարեկացու տաղերի առաջին հրատարակիչ (խորհրդային շրջանում) Արշավիր Մխիթարյանը Նարեկացու արքայական շքեղությամբ զարդարված սայլի նկարագրությունը կապում է Աղթամարի տաճարի պատկերներից մեկի բովանդակության հետ (Գրիգոր Նարեկացի, Տաղեր, տեքստի թարգմանությունը, ներածականն ու ծանոթագրությունները Արշավիր Մխիթարյանի, խմբագրությամբ՝ Սողոմոն Տարոնցու, Հայպետհրատ, 1957, էջ 26)՝ քաղելով այն Թովմա Արծրունու Պատմությունից՝ **«Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երեւի արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունելով պատանեակս լուսատեսակս, սպասաւորս ուրախութեան ընդնմին եւ դասս գուսանաց եւ խաղս աղջկանց զարմանալոյ արժանի»** (Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1916, էջ 482): Ավելի պակաս համոզիչ է, երբ գրականագետը սայլին բազմած արքայորդու երթը նմանեցնում է Գագիկ արծրունու թագադրության հանդեսին. **«... Եւ բազմութիւն զօրացն սպառազինեալ յաջմէ եւ յահեկէ՝ քնդմունք ճայթմանց եւ փայլատակմունք սուսերաց, գոչմունք փողոց եւ հնչմունք եղջերաց, վանգիւնք արնգաց եւ հեշտալուր քնարացն»** եւ այլն (նույն տեղում, էջ 467):

Ա. Մխիթարյանը խելամտորեն չի ընդգծում Նարեկացու տաղի խորհրդապաշտական ոգին եւ իր քննությունն ավարտում է ժամանակի խորհրդային ոգուն համար բանաձեւով՝ **«Սա զուտ կրոնական մտահղացում չէ, այլ արտահայտված է նոր կյանքի զարթոնքի իդեալը, հայրենիքի ապագայի հույսը, նրա հարությունը»** (Գրիգոր Նարեկացի, Տաղեր, 1957, էջ 27): Պետք է նշել, որ այսպիսի նվազագույն զիջումով նա հնարավոր է դարձրել Նարեկացու հոգեւոր տաղերի առաջին հրատարակությունը՝ գաղափարական վայրիվերումների այդ խառն շրջանում, մանավանդ, որ բավական հիմնավոր կարողացել է ներկայացնել Նարեկացուն՝ իբրեւ վերածննդի դարաշրջանի ամենավաղ հեղինակ:

1974 թ. Գ. Աբգարյանը հրապարակեց «Վերածնություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի» ուսումնասիրությունը (Գեւորգ Աբգարյան, Վերածնություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», Էջմիածին, 1974, թիվ 1, էջ 42-48 եւ թիվ 2, էջ 40-48): Այստեղ միջնադարյան մատենագրության անվանի հետազոտողը բազմակողմանի քննության է առնում տաղի բնագիրը՝ ձեռագրական տարբեր տարընթերցվածներով: **«Միջնադարից մինչեւ մեր օրերը,- մասնանշում է նա,- տաղի գնահատման հիմնական չափանիշն է հանդիսացել սայլի հանդիսավոր երթը պատկերող առաջին մասը, որն իրավամբ չգերազանցված մի պատկեր է իր տեսակի մեջ: Մասիսի լանջերից գլորվելով իջնում է գեղեցիկ զարդարված սայլը, որը քաշող սպիտակ (պետք է լինի՝ սաթ եւ սպիտակ- Ա. Մ.) եզների մազերը մարգարտի պես փայլում են եւ որի վրա խուրձ-խուրձ բարձված մանուշակը, կորնկանը, խոլորձը, իրենց բազմերանգ հմայքով եւ անուշ բույրով, ուղեկցում են սայլին: Այս ամենն այնքան գեղեցիկ է, որ չէր կարող չհմայել ընթերցողին ինչպես միջնադարում, այնպես էլ այսօր»**:

Գ. Աբգարյանը միանգամայն համերաշխ է Ա. Մխիթարյանի վերը բերված կարծիքին, որ՝ Քրիստոսի հարության մեջ Նարեկացին արտահայտել է ամենից առաջ **«հայրենիքի ապագա հույսը, նրա հարությունը»**:

Կարծես հաստատելու համար Աբգարյանի դիտողությունը՝ Ասատուր Մնացականյանը 1975-ին հրատարակած «ԺԶ-ԺԷ դդ. մոռացված բանաստեղծ Գրիգոր Վանեցին եւ նրա անտիպ տաղերը» հոդվածն ամբողջապես նվիրել էր Գրիգոր Նարեկացու նկարագրած սայլին եւ նրա նախատիպարի հարցին: Մնացականյանը գրում է. **«Մասնագետներին ցարդ չի հաջողվել պարզել այն նախահիմքը, որ հրաշակերտվել է Գրիգոր Նարեկացու գրչի տակ: Որոնումները ցույց են տալիս, որ այստեղ գործ ունենք աստվածաշնչային եւ առասպելական սայլի գաղափարի հետ»** (Էջմիածին, 1975, թիվ 10, էջ 42): Ինչպես ճիշտ նկատել է հեղինակը, Նարեկացու պատկերած սայլի համար նախահիմք է ծառայել Հին Կտակարանի Թագավորություններ Բ գրքի Զ գլխի 1-17-ում նկարագրված սայլը, որով Սինա լեռան վրա Մովսես մարգարեին՝ Աստծո տված օրենքների տապանակը Դավիթ թագավորը Կարիաթարիմ քաղաքից փոխադրում է Երուսաղեմ. **«Եւ ժողովեաց միւս անգամ Դաւիթ զամենայն երիտասարդս Իսրայելէ իբրեւ եւթանասուն հազար: Եւ յարեաւ գնաց... ի զառիվերն ընդ որ ել տապանակն Աստուծոյ, յորոյ վերայ կոչեցաւ անուն Տեառն Աստուծոյ զօրութեանց, որ նստի ի քերովբէս ի վերայ նորա: Եւ եհան եդ զտապանակն Տեառն ի վերա սայլի նորոյ: Եւ առ զնա ի տանէ Աբինադաբայ բլրացւոյ. եւ Ոզա եւ եղբարք նորա որդիք Աբինադաբա՝ վարէին զսայլն հանդերձ տապանակաւն... Եվ Դաւիթ եւ որդիքն Իսրայելի խաղային առաջի Տեառն տաւղօք եւ նուագարանօք զօրութեամբ, եւ երգովք եւ քնարօք եւ արնգօք եւ թմբկօք եւ ծնծղայիւք եւ փողովք»**:

Ինչպես տեսնում ենք՝ տապանակի վրա պատկերված էին քերովբեներ, ինչպես պատվիրել էր Աստված Մովսեսին՝ Սինա լեռան վրա (Ելք ԻԵ 10, 18-19), որոնց վրա՝ «անուն Տեառն զօրութեանց», իսկ սայլի առջեւից ընթանում էին Դավիթը եւ Իսրայելի որդիները՝ երգելով, ցնծությամբ ու նվագածությամբ: Նարեկացու պատերած սայլի վրա էլ կան սերովբեներ ու քերովբեներ, իսկ Քրիստոսի առջեւ շարված աթոռներին նստած են մանկունք (գրաբարում մանկունք նշանակում է թե՝ երեխա եւ թե՝ երիտասարդ)՝ գրկներին՝ խաչ տերունական, իսկ ձեռքերին՝ սաղմոսարան ու քնար եւ փառաբանում են Քրիստոսի ամենազոր հարությունը:

Շարունակությունը՝ էջ 7

# Մատթեոսի Ավետարանի մեկնություն

## Ուիլյամ Բարկլիի «Ամենօրյա ուսուցման Աստվածաշունչ» գրքի մեկնության հիման վրա

### Քրիստոսի տոհմածառը

**Մատթ. Ա 1-17**

Ժամանակակից ընթերցողին կարող է թվալ, թե Մատթեոսն իր ավետարանը սկսելու համար ընտրել է արտասովոր ճանապարհ՝ սկզբից եւեթ անվանումների երկար ցանկ ներկայացնելով ընթերցողին, սակայն հրեայի համար սա որեւէ մարդու կյանքի պատմությունը սկսելու ամենից բնական, հետաքրքիր ու հիմնական եղանակն էր:

Մատթեոս Ավետարանիչը սա անվանում է Հիսուս Քրիստոսի ծննդյան գիրք (biblos geneseos): Հրեաների համար, որոնք խիստ հետաքրքրվում էին ծննդաբանություններով, դա ընդհանուր արտահայտություն էր, որ նշանակում է մարդու տոհմածառի արձանագրում՝ մի քանի բացատրական նախադասություններով, որտեղ այսպիսի մեկնաբանությունն անհրաժեշտություն էր: Հին Կտակարանում հաճախակիորեն ենք հանդիպում հայտնի անձանց սերունդների ցանկերի (տես Ծնն. Ե 1, Ժ 1, ԺԱ 10, ԺԱ 27): Երբ հրեա մեծ պատմիչ Հովսեփոս Փլավիոսը գրում է ինքնակենսագրությունը՝ այն սկսում է իր ծննդաբանությամբ, ինչը, նրա իսկ վկայությամբ, ինքը հայտնաբերել էր հասարակական գրառումներում:

Ծննդաբանությունների նկատմամբ այս հետաքրքրության պատճառն այն էր, որ հրեաները մեծագույն նշանակություն էին տալիս տոհմածառի անաղարտությանը: Եթե որեւէ մեկի մեջ օտարի արյան ամենաչնչին խառնուրդ էր լինում՝ նա կորցնում էր հրեա եւ Աստծո ժողովրդի անդամ կոչվելու իր իրավունքը: Քահանան, օրինակ, պարտավոր էր ներկայացնելու իր տոհմածառի անխախտ արձանագրությունը՝ պարտադիր մինչեւ Ահարոն հասնող, եւ եթե ամուսնացած էր, նրա կինը պետք է ներկայացներ իր տոհմածառը՝ առնվազն հինգ սերունդից բաղկացած: Երբ Եզրաս քահանան աքսորից ժողովրդի վերադարձից հետո վերակազմակերպում է Աստծո պաշտամունքը եւ վերահաստատում քահանայության գործառույթը, Աբահիայի, Ակուսի եւ Բերզելայի որդիները զրկվում են սպասավորությունից եւ պիտակավորվում որպես պղծված, քանի որ «թեեւ մատյաններում փնտրեցին նրանց ծննդաբանությունը, սակայն գրված վկայություններ չգտնվեցին» (Բ Եզր. Բ 62): Հերովդես Մեծը զսարյուն հրեաներից մեծապես քամահրանքի էր արժանանում, որովհետեւ կիսով չափ եդովմայեցի էր: Տեսնելի է, որ անգամ Հերովդեսը կարեւորություն էր տալիս այս ծննդաբանություններին, որի լավագույն ապացույցն այն փաստն է, որ նա գրանցման պաշտոնական մատյանները ոչնչացրել էր, որպեսզի որեւէ մեկը չկարողանար հաստատել իրենից ավելի մաքուր ծննդաբանություն ունենալու հանգամանքը:



Ուստի պատահական չէ, որ Հիսուսի ծննդաբանությունը եւս կարող էր քննվել եւ հասցվել մինչեւ Աբրահամ:

Պետք է նշել, որ սույն ծննդաբանությունը դասավորված է շատ զգուշորեն, երեք խմբերով՝ յուրաքանչյուրը տասնչորս մարդկանցից կազմված: Փաստորեն, սա մասնագիտորեն կոչվում է հիշողական (mnemonic), ասել է թե՝ դասավորել այնպես, որ հեշտորեն հիշվի: Մշտապես պետք է ի մտի ունենալ, որ ավետարանները գրվել են գրքի տպագրությունից հարյուրավոր տարիներ առաջ: Շատ քիչ մարդիկ կարող էին նրանց իրական նմուշներն ունենալ, ուստի ցանկության դեպքում հարկադրվում էին հիշել դրանք: Այս ծննդաբանությունը, հետեւապես, դասավորված է այնպիսի եղանակով, որ դյուրին լինի մարդկանց հիշողության մեջ պահելու համար:

#### Երեք շրջափուլերը

Այս բաժինները, որ խարսխված են հրեաների պատմության երեք շրջափուլերի վրա, խորհրդանշում են մարդկության բովանդակ կյանքի երեք էտապները:

**Առաջինը** պատմությունը ներկայացնում է Աբրահամից մինչեւ Դավիթ արքա, ով Իսրայելը համախմբեց մեկ ազգության շրջանակում եւ այն դարձրեց աշխարհի ամենազորեղ ազգը:

**Երկրորդը** պատմությունը գրի է առնում մինչեւ բաբելոնյան գերություն, որը հրեա ազգի ամոթի, ողբերգության ու աղետի ընդհանուր պատկերն է ցուցանում:

**Երրորդը** շարադրանքն է այն ժամանակահատվածի, որ բաբելոնյան գերությունից հասնում էր մինչեւ ներառյալ Հիսուս Քրիստոս, Ով ազատագրում է մարդուն ստրկությունից, փրկում աղետից եւ ողբերգությունը վերածում հաղթանակի:

Այսպես, երեք շրջափուլերը ներկայացնում են մարդկության հոգեւոր պատմության ընթացքը.

ա) **Մարդը լույս աշխարհ է եկել վեհության համար.** «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով» (Ծնն. Ա 27): Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ» (Ծնն. Ա 26): Աստծո կամքն էր մարդուն արարել վեհության մեջ, ով կոչված էր լինելու Աստծո ընկերակիցն ու բարեկամը: Մարդը, ըստ էության, կոչված էր իշխան լինելու:

բ) **Մարդը կորցրեց իր վեհությունը**. Աստծո սպասավորը լինելու փոխարեն դարձավ մեղքի գերին, ազատ կամքի գործադրմամբ ավելի շուտ մերժեց ու չհնազանդվեց Աստծուն, քան մտավ նրա հետ ընկերակցության մեջ՝ խափանելով արարչագործության մեջ Աստծո մտադրությունն ու ծրագիրը:

գ) **Մարդը կարող է վերագտնել իր վեհությունը.** Հետագայում անգամ Աստված չթողեց մարդուն ինքնիրեն ու իր միջոցներին ապավինած, չթողեց կործանվել իր հիմարության հետեւանքով, այլ աշխարհ ուղարկեց իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ մարդուն փրկելու մեղքի ճահճից եւ ազատագրելու նրա կապանքներից: Քրիստոսի միջոցով, հետեւաբար, մարդը կարող է վերստին ձեռք բերել Աստծո հետ իր կորուսյալ ընկերակցությունը:

Այս ծննդաբանությամբ Մատթեոսը մեզ ցույց է տալիս ողբերգության վախճանը եւ փառքի ազատության վերականգնումը, ինչն Աստծո ողորմությամբ, ընդհանրապես մարդկության եւ յուրաքանչյուր անհատի պատմությունն է:

#### Մարդկային երազանքների իրականացումը

Այս հատվածը հասկանալի է Հիսուսի վերաբերյալ երկու իրողությամբ.

ա) Շեշտվում է Քրիստոսի՝ Դավթի որդի լինելու փաստը:

Ծննդաբանությունը շարադրվել է գլխավորաբար վկայելու եւ ապացուցելու այս հանգամանքը, ինչը Նոր Կտակարանը բազմիցս հաստատում է:

Պետրոս առաքյալն այս մասին վկայում է քրիստոնեական եկեղեցու պահպանված առաջին քարոզում (տես՝ Գործք Բ 29-36): Պողոսը խոսում է Քրիստոսի մասին, Ով մարմնով սերում է Դավթի սերնդից (տես Հռոմ. Ա 3): Հովվական նամակների հեղինակը հիշեցնում է, որ Հիսուս Քրիստոս Դավթի ցեղից, հարություն է առել (տես Բ Տիմ. Բ 8): Հայտնության հեղինակը լսում է հարուցյալ Քրիստոսի ձայնը, որ ասում է. «Ես արմատ եւ սերունդ եմ Դավթից» (Հայտն. ԻԲ 16):

Շարունակությունը՝ էջ 6

ՇԵՆՈՒԴԱ Գ

# ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



*Սկիզբը՝ էջ 6*

Հին Կտակարանում կարդում ենք նաեւ, որ Աստված Իրեն նմանեցնում է ջրի, երբ հանդիմանում է ժողովրդին. «Թողեցին Ինձ՝ կենդանի ջրի աղբյուրին, եւ իրենց համար ջրհորներ փորեցին, ծակ ջրհորներ, որոնք չեն կարող ջուր պահել» (Երեմ. Բ 13)։ Այս միտքն արտահայտվում է նաեւ Նոր Կտակարանում՝ Տեր Հիսուս Քրիստոսի խոսքում. «Ով հավատում է Ինձ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրի գետեր կբխեն»։ Սա ասում էր Հոգու մասին, որն ընդունելու էին Իրեն հավատացողները» (Հովհ. Է 38-39)։ Այս խոսքերը նման են Տիրոջ՝ Իր մասին ասածին, երբ խոսում էր սամարացի կնոջ հետ կենդանի ջրի մասին եւ ասում, որ Ինքն է կենդանի ջուրը տվողը։ Նա ասում էր. «Բայց այն ջուրը, որ ես կտամ նրան, կլինի նրա համար ջրի աղբյուր, որ բխում է հավիտենական կյանքի համար» (Հովհ. Դ 14)։

Հետեւաբար, ջուրը խորհրդանիշն է կյանքի եւ երբեմն էլ՝ հենց Սուրբ Հոգու։ Որքա՜ն գեղեցիկ են աստվածային ներշնչանքի խոսքերն արդարի մարդու մասին Առաջին սաղմոսում. «Նա կլինի ինչպես ծառ, որ տնկված է հոսող ջրերում, որն իր պտուղը ժամանակին կտա» (Սաղ. Ա 3)։ Այս պտուղը Սուրբ Հոգու պտուղն է։

Ջրի, կյանքի եւ Սուրբ Հոգու միջեւ կապը սկիզբ է առնում Ծննդոց գրքից (Ա 2) եւ շարունակվում մինչեւ Հայտնության գրքի ավարտը. «Ես ծարավյալներին ձրի կտամ կյանքի ջրի աղբյուրից» (Հայտ. ԻԱ 6), «Եվ ինձ ցույց տվեց կենդանի ջրի բյուրեղանման մաքուր գետ, որ դուրս էր գալիս Աստծո եւ Գառի աթոռից» (Հայտ. ԻԲ 1), եւ «Ով ծարավ է, թող գա, եւ ով կամենում է, թող ձրի վերցնի կյանքի ջուրը» (Հայտ. ԻԲ 17)։

Կարմիր ծովով անցման ժամանակ ջուրը խորհրդանշում էր միաժամանակ կյանքն ու մահը. ծառայի մահն ու ջրից դուրս եկող ազատի կյանքը։

Ավագ Հինգշաբթի օրվա ջուրը մաքրագործում էր խորհրդանշում։ Ահա թե ինչու առաքյալների ոտքերը լվալուց հետո Տերն ասաց. «եւ դուք մաքուր եք» (Հովհ. ԺԳ 10)։ Սաղմոսերգուն ասում է. «Մաքրությամբ կլվամ ձեռքերս» (Սաղ. ԻԶ 6)։ Այս մաքրագործումը վերստին ծննդյան լվացումն է խոսքի միջոցով, այն մաքրագործումը, որն ընդունում ենք վերստին ծննդյան ավազանում՝ մկրտության մեջ վկայակոչված առաքյալի խոսքով. «.... եւ մկրտելով մեր մարմինը մաքուր ջրով» (Եբր. Ժ 22)։

**ՋՈՒՐ ԵՎ ԱՐՅՈՒՆ**

Խաչի վրա, երբ զինվորներից մեկը նիզակով խոցեց Տեր Հիսուսի կողը, «իսկույն արյուն եւ ջուր դուրս եկան» (Հովհ. ԺԹ 34)։ Ո՞րն է սրանից բխող աստվածային իմաստությունը։

Նրա կողից արյունը ելավ փրկության իմաստը տալու մեզ։ Բայց ինչպե՞ս ենք մենք ընդունում այս փրկությունը։ Մենք այն ընդունում ենք մկրտության ջրի միջոցով։ Հետեւաբար Քրիստոսի կողից ջրի եւ արյան բխումը ցույց տվեց մեզ փրկության միջոցները։ Մենք ջրի միջոցով ենք ընդունում Քրիստոսի արյունը, որը մեզ մաքրում է ամեն մեղքից։

Ս. Հովհաննես ավետարանիչը, ով վկայում է արյան եւ ջրի բխման դեպքը, պարզաբանում է այս իրողությունը՝ ասելով. «Այս երեքն են վկայում՝ Հոգին, ջուրը եւ արյունը, եւ այս երեքը մեկ են» (Ա Հովհ. Ե 8)։ Այս համարը բացատրում է այն փրկությունը, որն ընդունում ենք։

Փրկությունը մեզ տրվեց արյամբ (Քրիստոսի արյամբ), եւ մենք այս արյան պարգեւն ընդունում ենք ջրով եւ Հոգով մկրտությամբ։ Հետեւաբար այս երեք տարրերն էլ՝ արյունը, ջուրն ու Հոգին, առկա են մկրտության մեջ։

**ՀԱՐՑ 8. Արդյո՞ք ջուրն ունի այս բոլոր ներգործությունները։**

ա) Այս հարցը հիշեցնում է Նեեման Ասորու վրդովմունքը, երբ Եղիսեն թելադրեց նրան Հորդանանում լվացվել՝ բորոտությունից մաքրվելու համար։ Նա չկարողացավ հավատալ, որ պահանջվում էր այդքան պարզ մի բան՝ գետում լվացվել, մանավանդ որ նրա հայրենիքում՝ Դամասկոսում, ավելի լավ գետեր կային, քան Իսրայելում (Դ Թագ. Ե 10-12)։ Բայց երբ նա հնազանդվեց ու լվացվեց, իր հավատով մաքրվեց։

Մի փոքրիկ դիտողություն. մարգարեն հրամայեց Նեեմանին լվացվելու Հորդանան գետում, ուր հետագայում Հովհաննես Մկրտիչը պիտի մկրտեր (Մատթ. Գ 6)։ Արդյոք մե՞նք էլ Նեեմանի պես պիտի մտածենք, թե ջուրը չի կարող այս բոլոր ներգործություններն ունենալ։ Աստված շնորհը տալիս է Իր կամեցած եղանակով։ Շնորհն այս դեպքում ոչ թե հենց Հորդանանի ջրի մեջ էր, այլ այդ ջրի վրա Աստծո հեղած մաքրիչ զորության։ Նույնը կարելի է ասել մկրտության մասին, ինչպես բացատրելու ենք ավելի հետո։

բ) Երբ Տերը բժշկում էր ի ծնե կույրին, նրա աչքերին կավ դրեց եւ ասաց. «Գնա լվացվիր Սիլովամի (որ թարգմանվում է «առաքված») ավազանում»։ Գնաց լվացվեց, եկավ եւ տեսնում էր» (Հովհ. Թ 6-7)։ Միայն հավատով կույրը կարող էր տեսնել, սակայն Աստված կամեցավ նրան լույս շնորհել (մկրտությունը հոգեւոր լուսավորում է) ջրի միջոցով։ Թող Տիրոջ կամքը կատարվի այն եղանակով, որով Նա կամենում է. մենք չենք Աստծո իրականացնելիք ծրագրերի մշակողը. օրհնյալ լինի Նրա անունը։

գ) Պատասխանելով այս հարցին՝ ի հավելումն ասենք, որ մկրտության ջուրը հասարակ ջուր չէ եւ մկրտվողն էլ միայն ջրից չի ծնվում, այլ ջրից եւ Հոգուց։ Սուրբ Հոգին սրբագործում է մկրտության ջուրը՝ տալով դրան հատուկ բնություն, այնպես, որ ով նրա մեջ թաթախվում է, ծնվում է ջրից եւ Հոգուց։ Այսպես մկրտվողն ընդունում է Քրիստոսի փրկարար արյան պարգեւը։ Երբ նա թաթախվում է այս ջրի մեջ, թաղվում է Քրիստոսի հետ եւ հաղորդակից դառնում Նրա մահվանը, որպեսզի կարողանա հաղորդակից լինել նաեւ Նրա հարությանը։ Ահա թե ինչու մկրտության ջուրը սրբագործելիս նրա մեջ լցնում ենք սուրբ Մեռոն՝ Սուրբ Հոգու յուղը, որով ջուրը սրբագործվում է Սուրբ Հոգով։ Ով ծնվել է այսպիսի ջրից, ծնվել է ջրից եւ Հոգուց։

Մկրտության ջուրը սրբագործելիս հոգեւորականը ջուրը սրբագործող եւ Սուրբ Հոգին հրավիրող աղոթքներ է ասում։ Նա նաեւ ընթերցում է Սուրբ Գրքից հատուկ հատվածներ, որով մեզ մաքրող մկրտության ջուրը սրբագործվում է խոսքով։

*Շարունակելի*

*Թարգմանությունը*
*Սեդա ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

# ՄՈՐԻՑ ՖՈՆ ԿՈՑԵԲՈՒԻ ԽԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ



*Սկիզբը՝ թիվ 19-21*

«... Բազմաթիվ նեղ փողոցներից անցնելուց հետո ձիերից վար իջանք սարդարի դռան մուտքին, վորի վրա նրա սպասավորները առաջ յեկան՝ դիմավորելու մեզ։ Անցնելուց հետո բազմաթիվ բակերից, վորոնց յերկու կողմերում կանգնել եյին մարդիկ զեն ի ձեռին, մենք մի բաց տարածությունից ներս մտանք, զարդարված մարմարյա ավազանով եւ աղբյուրներով։ Սարդարը առաջացավ մինչեւ դուռը եւ առաջնորդեց մեզ մի ընդարձակ դահլիճ, վորի բաց կողմը նայում եր դեպի այս բակը, ուր հավաքվել եյին Յերեւանի ամենանշանավոր մարդիկ։ Վոչ վոք արտոնված չեր մտնելու դահլիճը, բացի սարդարի յեղբորից եւ մեր մեհմանդարից։ Ուշադրության նվազ մի նշան չեր սարդարի կողմից մեզ համար աթոռներ հայթայթելը, վորովհետեւ պարսկական յեղանակով գետին նստելը մեզ համար անկարելի եր, ինքն էլ նստեց մի աթոռի վրա։ Պատերից կախված եյին տարբեր ձեւի փոքրիկ հայելիներ, եւ նրանց մեջտեղում զանազան գույնի ծաղիկներ ու փոքրիկ նկարներ...

Զանգու գետը հոսում ե մեծ պատուհանի տակից, նրա ափերը յեզերված են բարձր ծառերով եւ մի քարի կամարով քարե գեղեցիկ մի կամուրջ տանում ե դեպի մյուս ափը, վորտեղ հորիզոնը միանում ե Արարատ լեռան։ Ամարանոցի համար ավելի լավ բնակարան չի կարող հարդարվել եւ պատշաճեցվել։ Ողի մի մեղմ հոսանք եւ աղբյուրների ջրերը հաճելիորեն մեղմացնում են տաքը, եւ նույնիսկ ձյունապատ Արարատի տեսարանը ստեղծում ե զովության զգացում։ Այսուհանդերձ, ասում են թե ամառը այնքան տաք ե Յերեւանում, վոր բնակիչները գնում են մերձակա բարձունքները, եւ սարդարը ինքն էլ ստիպված ե գնալ ճամբար...

Ստորեւ տալիս եմ այնպիսի մասնավոր տեղեկություն, վոր յես կարողացա իմանալ այս տեղի մասին։ Յերեւան հայերեն մի բառ ե, վոր նշանակում ե «այն վոր յերեւեց կամ տեսնվեց», սա ակնարկում ե այն ավանդության, թե այս առաջին տեղն ե, վոր յերեւեց Նոյին, յերբ նա իջնում եր Արարատից։ Լեռը գտնվում ե տասը վերստ հեռավորության վրա։ Քաղաքը ընդհանրապես զուրկ չե գեղեցիկ դիրքերից, բայց շենքերը չեն տեսնվում, զետեղված լինելով պարտեզների յետեւը։ Մոտից հոսում են յերկու գետ, մեկը Զանգուն, եւ մյուսը կոչվում ե Կվերբուլակ (= քառն բազուկ), [պետք ե լինի Կըրկբուլաղ = քառն աղբյուր]։ Առաջինը բխում ե Յերեւանի լճից [Սեւանից], անցնում ե Հայաստանի մեծ մասով եւ միանում ե Արաքսին, վոչ շատ հեռու Կասպից ծովից [?]։ Պարսկաստանի պատմությունը լուռ ե այս քաղաքի ծագման մասին, եւ այդ պատճառով բնակիչները յենթադրում են թե աշխարհի ամենահին քաղաքն ե, եւ թե ջրհեղեղից հետո Նոյը հաստատվեց այստեղ։ 1582 տարում թուրքերը տիրեցին Յերեւանին եւ Մուրադ Գ.-ի ժամանակ այստեղ շինեցին մի բերդ, վոր տակավին կանգուն ե, եւ այս տեղից մի թնդանոթի հարվածի հեռավորության վրա ե գտնվում։ 1607 թվին պարսիկները Շահ Աբբասի առաջնորդությամբ վերագրավեցին եւ ընդարձակեցին ամրությունները։ Տասնմեկ տարի հետո նրա հողե պարիսպները չորս ամիս դիմադրեցին թուրքերի հարձակմանը, վորոնք ստիպված եյին վերացնել պաշարումը։ Աբբաս մեծի մահից հետո, թուրքերը վերստին պաշարեցին ու գրավեցին Յերեւանը, բայց հետագայում, 1636 թվին, Սոֆին [Սեֆին] նորից խլեց նրանցից, Մուրադ Դ.-ի թագավորության ժամանակ, եւ ամբողջ պահակազորը սրախողխող յեղավ։ Հետո, նորից ընկավ թուրքերի ձեռքը 1721 թվին (պետք է լինի 1724 - Ի. Ղ.), Սոֆիի [Սեֆիի] տան խռովությունների պատճառով, բայց նշանավոր Նադիր Շահը վերագրավեց այն 1734 տարում։ Թամասպի [Թահմազ] մահից հետո Պարսկաստանում տիրող քայքայիչ խռովություններից ոգուտ քաղելով Հերակլ թագավորը գրավեց Յերեւանը, բայց շուտով կորցրեց իր ամբողջ կայսրության հետ միասին, եւ վերջապես ռուսները Կոմս Գուդովիչի հրամանատարությամբ փորձեցին հարձակումով գրավել (1805 թ. - Ի. Ղ.) այս վայրը, բայց պարտվեցին։

Արարատ անունը հիշեցնում ե ինձ իմ քրիստոնեական փոքրիկ պատկերները, վորոնք իմ ուշադրությունն եյին գրավում, յերբ յես փոքր եյի։ Այս լեռը, վորի աշխարհագրական ծավալը այնքան էլ ճիշտ պատկերված չեյին այդ նկարներում, եւ վորի գագաթին հանգչում եր Նոյի տապանը, յերկու անգամ ավելի մեծ քան Արարատը, հիմա իր փառահեղությամբ կանգնել ե իմ դիմաց։ Դա բարձրանում ե Արաքսի մյուս կողմը, վոր վոլորվում ե նրա ստորոտի յերկայնքից, յերկու բարձունքներ են, վորոնցից մեկը նվազ մեծ ե քան մյուսը, եւ հետեւաբար կոչվում ե այստեղ Արարատ Սաղաղ, Արարատի վորդի։ Մեկ խոսքով զետեղված ե Հայաստանում, Աղի լեռների շղթայի մոտ, ուր քուրդերը պահում են իրենց բնակատեղին։ Կենտրոնից մինչեւ վեր պատված ե ձյունով եւ ընդհանրապես ծածկված ամպերով։ Այս լեռան մասին շատ առասպելական պատմություններ են պատմում, բայց ճշմարիտ ե վոր կարելի չե բարձրանալ նրա գագաթը, հետեւյալ հայտնի պատճառով,- մեջտեղից մինչեւ կատարը կատարելապես զառիվայր ե եւ ծածկված սառույցով։ Թրքական հարուստ մի փաշա, ճամփորդության սիրահար, փորձեց բարձրանալ նրա կատարը, բայց կենտրոնը հասնելուն պես, ցրտի սաստկությունից ու քամու կատաղությունից ստիպված եր հրաժարվել իր մտադրությունից։

Յերեք տարի առաջ, [սառույցի] մի ահագին զանգված բաժանվեց ու վար գլորվեց, եւ հարեւան մի գյուղի բնակիչները յենթադրում են վոր Նոյի տապանի մի գերան գտնվել ե ձյունի մեջ։ Արդարեւ հավանական ե վոր լեռներից հաճախ փայտի կտորներ վար գլորվեն։ Արարատում գտնվում են բազմաթիվ գազաններ եւ հսկա մեծությամբ օձեր։ Նրա ստորոտում զետեղված ե մի վանք, վոր կոչվում ե Առաքելավանք, վոր հայերենով նշանակում ե «առաքելոց վանքը»։ Հայ ժողովուրդը այդ վայրը համարում ե նվիրական, եւ հավատում են թե Նոյը առաջին անգամ այդ տեղում շնորհակալություն ե հայտնել աստծուն, եւ կառուցել ե իր առաջին բնակարանը»։

*Պատրաստեց*
*Իգիթ ՂԱՐԻԲՅԱՆԸ*
*Հնագիտ. դոկտոր, պրոֆեսոր*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ
**հեռախոս՝**
**(0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 1. 12. 2003թ.
**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**